# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԳՀԱՊՁԲ-22/36 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22.04.2022թ.

14.04.2022-22.04.2022թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-22/36 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնոլոգիական, տնտեսական գնացքների, հիմնանորոգման ուղեմասի պետ, |
| Մ. Նազարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնոլոգիական, տնտեսական գնացքների, հիմնանորոգման ուղեմասի ավագ էլեկտրամեխանիկ, |
| Ա. Բեգլարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի պետ, |
| Ա. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Հ. Պետրոսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի գծային ուղեմասի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գրիգորյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ գնումների և մատակարարման բաժնի գնումների գլխավոր մասնագետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2022թ.-ի ապրիլի 14-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Բետոնի հավելանյութ Գլենիում 126 | 280000 |
| 2 | Բետոնի հավելանյութ WP-701 | 69000 |
| 3 | Կանիստր/ Բենզինի բաք | 375000 |
| 4 | Հորատման մուրճ МО - 2 Б | 900000 |
| 5 | Հորատման մուրճի տեգ (պիկ) П-11 | 2500000 |
| 6 | Ջապանակ հորատող մուրճի МО - 2Б | 800000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | էլ. հասցե |
| 1 | «Հրանտ Վարդանյան » Ա/Ձ | 28112575 | ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան 83, բն. 9 | +(374) 94303535 | hrant.vardanyan.001@mail.ru |
| 2 | «ՌՎ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | 02853495 | ՀՀ, ք.Երևան,Ռ. Լեմկինի փ., շ. 14, բն. 147 | 098042913 | rvprojectllc@gamil.com |
| 3 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 23241409 | ՀՀ, Էրեբունի, Դավիթ Բեկի 2 թղմ. տ. 34/1 | 091411811 | artur.gnumner@gmail.com |

| 4 | «Պրապիոն» ՍՊԸ | 03306445 | ՀՀ, ք. Երևան, Չարենց 147/1 | +(374)44989899 | profshin2020@gmail.com |
|---|---|---|---|---|---|

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակցի.

- «Պրապիոն» ՍՊԸ - սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում Հավելված 2-ը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, Հավելված 1-ից բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «Պապիրուս» ՍՊԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինեիք «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով և հայտով ներկայացնեիք նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը, հայտով Հավելված 1.3-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5. և 5.5 (Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)) բաժինների «ա» պարբերություններում համապատասխան նշում արված չէ, մինչդեռ 4.5.1. և 5.5.1 (Մասնակցության չափը (%)) և 4.5.2 և 5.5.2 (Մասնակցության տեսակը) բաժինները լրացված են, Հավելված 1-ով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում է սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջված հետևյալ տեղեկատվությունը՝ 1-ին չափաբաժնի մասով՝ «Սուպերպլաստիֆիկատոր արագացնող հատկությամբ: Պակասեցնում է բետոնի մեջ ջրի քանակը,բարձրացնում է բետոնի սկզբնական և վերջնական ամրությունները, բետոնին հաղորդում է ռեոպլաստիկ հատկություններ: Քլորի պարունակությունը՝ ոչ ավել, քան 0.1%: Սպիրտի

պարունակությունը՝ ոչ ավել քան 3%: Խտություն: 1.076-1.116կգ/լ: Ծախս: 0.6-1.5կգ 100կգ ցեմենտի համար: Փաթեթավորում: 20 կգ տարաներով, կամ համարժեք ապրանքանիշով» և 2-րդ չափաբաժնի մասով՝ «Բետոնի հավելանյութ WP-701 - Ջրացեմենտային հարաբերությունը նվազեցնող, բետոնի հասունությունը ավելացնող և բետոնին անջրաթափանցելիություն հաղորդող հավելանյութ: Քլորի պարունակությունը՝ ոչ ավել քան 0.1%: Ալկալիների պարունակությունը՝ ոչ ավել քան 5%: Խտություն: 1.053-1.093կգ/լ: Ծախս: 0.5-0.8կգ 100կգ ցեմենտի համար: Փաթեթավորում: 20 կգ տարաներով, կամ համարժեք ապրանքանիշով»:

- «ՌՎ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ – Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկի հավելվածում 4-րդ չափաբաժնի համար նշված գնման առարկայի անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Բետոնի հավելանյութ Գլենիում 126 | «Պրապիոն» ՍՊԸ | 280,000.00 | 1,125.00 | 225.00 | 1,350.00 |
| | | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | 280,000.00 | 280,000.00 | - | 280,000.00 |
| 2 | Բետոնի հավելանյութ WP-701 | «Պրապիոն» ՍՊԸ | 69,000.00 | 916.67 | 183.33 | 1,100.00 |
| 3 | Կանիստր/ Բենզինի բաք | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 375,000.00 | 450,000.00 | - | 450,000.00 |
| 4 | Հորատման մուրճ ՄՕ - 2 Բ | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | 900,000.00 | 900,000.00 | - | 900,000.00 |
| 5 | Հորատման մուրճի տեգ (պիկ) П-11 | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | 2,500,000.00 | 2,500,000.00 | - | 2,500,000.00 |
| 6 | Ջապանակ հորատող մուրճի ՄՕ - 2Բ | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | 800,000.00 | 800,000.00 | - | 800,000.00 |
| | | «ՌՎ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | 800,000.00 | 635,000.00 | 127,000.00 | 762,000.00 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. «ՌՎ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը 4-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

3. 15.04.2022թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել «Պրապիոն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «Պրապիոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1,2 | «Պրապիոն» ՍՊԸ | բավարար |
| 3 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | բավարար |
| 1,4,5,6 | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | բավարար |
| 4 | «ՌՎ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | անբավարար |
| 6 | «ՌՎ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | բավարար |

4. 19.04.2022թ. հանձնաժողովի նիստը կասեցնել՝ 3-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատված մասնակցի հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 2022թ. ապրիլի 21-ին ժամը 10:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 8-րդ հարկում:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Նախքան բանակցությունների մեկնարկը հրավերում նշված քարտուղարի էլ. հասցեին «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է նոր նվազեցված գնային առաջարկ՝ հաստատված էլ. թվային ստորագրությամբ:

2. 21.04.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ոչ ոք ներկա չէր:

3. Բանակցությունների շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված նոր գնային առաջարկն է.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկ |
|---|---|---|

| N | Անվանում | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| 3 | Կանիստր/ Բենզինի բաք | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 375,000.00 | 375,000.00 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին

| Չափա բաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրա ծ տեղ | Անվանում | | |
| 1 | 1 | «Պրապիոն» ՍՊԸ | X | 1125 |
| | 2 | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | | 280000 |
| 2 | 1 | «Պրապիոն» ՍՊԸ | X | 916.67 |
| 3 | 1 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | X | 375000 |
| 4 | 1 | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | X | 900000 |
| 5 | 1 | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | X | 2500000 |
| 6 | 1 | «Հրանտ Վարդանյան» Ա/Ձ | X | 800000 |
| | 2 | «ՌՎ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | | 635000 |

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվանից սկսած 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ավետիք Գրիգորյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Մարիամ Նազարյան ________________

Արմեն Բեգլարյան ________________

Արմեն Գրիգորյան ________________

Հարություն Պետրոսյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Անահիտ Առաքելյան ________________